# «Երիտասարդ պատմագիրների ասոցացիա» ՀԿ-ի EduArmenia Կրթական նախաձեռնություն

## Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

## Հետազոտական աշխատանք

**Թեմա՝** Ուղղագրական սխալները որպես ուսումնական դժվարություններ, դրանց հաղթահարման ուղիները

**Հետազոտող ուսուցիչ՝ Նուշիկ Սաքեյան**
(Գավառի Գ. Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոց)

**Գավառ 2023**

# Բովանդակություն

Ներածություն ---------- 3

1. Ուղղագրության ուսուցման վերաբերյալ ժամանակակից մոտեցումները---------- 4

2. Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցման առանձնահատկությունները---------- 5

3. Ուղղագրության ուսուցումը, որպես կրտսեր դպրոցականի գրավոր խոսքի զարգացման միջոց---------- 7

4. Ուղղագրական սխալները, որպես ուսումնական դժվարություններ, դրանց հաղթահարման ուղիները---------- 9

5. Տարրական դասարաններում Ուղղագրական սխալների, դրանց կանխման նպատակների հետազոտություն---------- 14

6. Եզրակացություն---------- 20

7. Օգտագործված գրականություն---------- 21

8. Հավելվածներ---------- 22

# Ներածություն

**Թեմայի արդիականությունը**

Քաղաքակիրթ աշխարհում գրագիտությունը շարունակում է գերակա խնդիր մնալ:

Ժամանակակից հասարակությունը կարևորում է զարգացած հաղորդակցական կարողություններով համագործակցային հմտություններ ունեցող գրագետ սերնդի դաստիրակությունը: Այս համատեքստում ուղղագրության կանոններին տիրապետելը լավագույն երաշխիքներից մեկն է:

Ուղղագրությունը որպես գրելու կանոնների համակարգ պարտադիր է ողջ հասարակության համար:

Ուղղագրությունը որպես հայոց լեզվի բնագավառ ընդգրկված է հանրակրթության ոլորտում: Ուղղագրության ուսուցումը հանրակրթական պետական չափորոշչի պահանջներից է և հանրակրթական ծրագրի բաղկացուցիչ մասն է կազմում:

Ուղղագրության կանոնների ուսուցումը որոշակի չափով՝ ըստ ուսումնական բեռնվածության ընդգրկված է տարրական կրթության ծրագրում:

Ուղղագրությունը՝ որպես գրելու կանոնների համակարգ պարտադիր է լեզվի համար, իսկ ուղղագրության կանոններին տիրապետելը բարդ և աշխատարար գործընթաց է, որն ունի բազում խոչընդոտներ: Այդ խոչընդոտների մեջ առանձնահատուկ դեր ունեն այն ուղղագրական սխալները, որոնք երևան են գալիս ուսումնառության շրջանում՝ հատկապես կրտսեր դպրոցական տարիքում:

Ուսումնական առաջադիմությունը մեծամասամբ կախված է գրավոր աշխատանքների որակից, որի չափանիշներից մեկը ուղղագրության կանոնների պահպանումն է: Սակայն փաստ է, որ գրավոր աշխատանքները շատ հաճախ ընթանում են միօրինակ և իրացվում են որպես ծրագրային պահանջ:

Այս առումով տարրական դասարաններում կարևորում ենք ուղղագրական սխալների ախտորոշումը և ժամանակակից մեթոդական հնարների կիրառմամբ դրանց կանխումը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել տարրական դասարաններում աշակերտների թույլ տրված ուղղագրական սխալները կանխելու արդյունավետ եղանակները:

**Խնդիրները՝**

- Ուսումնասիրել հայերենի ուղղագրության ուսուցմանը վերաբերյալ ժամանակակից մոտեցումները:
- Բացահայտել տարրական դասարաններում մայրենիի դասի լեզվական փուլի առանձնահատկությունները՝ ուղղագրական տարրական գիտելիքների ուսուցման համատեքստում:
- Ուղղագրական սխալները որպես ուսումնական դժվարություններ և դրանց հաղթահարման ուղիները:
- Մեթոդների ընտրությունը, աշխատանքի նկարագրությունը:

1. **Հայերենի ուղղագրության ուսուցման վերաբերյալ ժամանակակից մոտեցումները**

Ուղղագրությունը, որպես կանոնների համակարգ պարտադիր է ողջ հասարակության համար: Ուղղագրության իմացությունը գրագիտության նախապայմաններից մեկն է: Ուղղագրությունն ընդգրկված է հանրակրթության ոլորտում, այն հանրակրթական պետական չափորոշչի պահանջներից մեկն է: Որպես հայոց լեզվի ուսուցման բաղկացուցիչ մաս, ուղղագրությունն ընդգրկված հնչյունաբանության, բառագիտության, քերականության ուսուցման համակարգում: Տարրական դպրոցում ուղղագրության ուսուցումը կատարվում է գործնական ճանապարհով, առանց կանոնների և սահմանումների տրման:

Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության ուսուցման հարցը քննության է ենթարկվել և՛ լեզվաբանների, և՛ մանկավարժ-մեթոդաբանների կողմից: Ժամանակաշրջանը նշանավորվում է մեթոդական գրականության ստեղծմամբ: Այս շրջանում հրատարակվել են մեթոդական ձեռնարկներ, ուղղագրական բառգրքույկներ, դպրոցական ուղղագրական բառարաններ:

Արարատ Ղարիբյանը «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիա» գրքում (1954) անդրադառնում է ուղղագրության ուսուցման հարցերին, հանգամանորեն նկարագրում ուղղագրական սխալների շուրջ տարվող աշխատանքների մեթոդաբանությանը:

Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցման անհրաժեշտության և դասավանդման մեթոդաբանության հարցերը հանգամանորեն քննվում են անվանի մանկավարժ Աշոտ Տեր- Գրիգորյանի «Հայոց լեզվի մեթոդիկա» գրքում (1980):

Նորագույն շրջանի մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա» գրքում անդրադարձել է տարրական դասարաններում մայրենի լեզվի դասավանդման խնդիրներին, մեթոդաբանությանը, ինչպես նաև ուղղագրության ուսուցման, ուղղագրական սխալների շուրջ տարվող աշխատանքների կազմակերպման հարցերին:

«Մայրենիի տարրական դասարանների դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների դաստիարակությունը» , ըստ այդմ, որպես չափորոշչային պահանջ՝ գրական հայերենի գործնական ուսումնասիրման, խոսքի զարգացման և ուղղագրության խնդիրները որոշակիորեն արտահայտված են մայրենիի գործող դասագրքերում : Մայրենիի դասավանդումը տարրական դասարաններում առանձնահատուկ է իր գործնական բնույթով: Լեզվի ուսուցումը ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է, հետևաբար այն պետք է ապահովի համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում:

Պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանը իրավացիորեն պնդում է, որ չնայած լեզվի ուսուցման գործնական բնույթին՝ տարրական դպրոցում լեզվական տեսական գիտելիքների ուսուցումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները:

## 2. Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցման առանձնահատկությունները

Մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկը գրելու կարողությունների զարգացումն է, գրավոր խոսքի մշակումը: Թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքի դրսևորման հիմք և ելակետ են հանդիսանում բառապաշարը, լեզվական տարրական գիտելիքները և խոսք կառուցելու կարողությունը: Գրավոր խոսքի առանձնահատուկ կողմերն են ուղղագրությունը և կետադրությունը, որոնց միջոցով այն դառնում է հաղորդակցման միջոց:

ՈՒղղագրության ուսուցումը տարրական դասարաններում երկակի բնույթ ունի՝ մի կողմից այն վերաբերում է լսածը ուղղագրական կանոնների համապատասխան գրելուն, մյուս կողմից՝ ուղղախոսության կանոնների համաձայն՝ գրածը ճիշտ կարդալուն: Այդ պատճառով ուղղագրությունը տարրական դասարաններում սերտ առնչվում է ուղղախոսության հետ:

Տարրական դասարաններում ուղղագրության և ուղղախոսության դերի մասին Ա. Տեր-Գրիգորյանը գրում է. «ՈՒղղագրական օրինաչափությունների ուսուցումը, ըստ էության, մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և

հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական կուլտուրայի բարձրացման համար» :

- Լեզվի ուսուցմամբ զբաղվող մեթոդաբանները առանձնացնում են ուղղագրության ուսուցման մի քանի մեթոդ՝
- ընդօրինակման մեթոդ, որի հիմքը ճիշտ գրված բառերի ընդօրինակումն է կամ արտագրությունը:
- հնչյունային մեթոդ, որի համաձայն պետք է կարևորել աշակերտի հնչյունային լսողության զարգացումը, կարևորվում է բառն ըստ հնչյունների վերլուծելու, ապա համադրելով գրելու կարողությունը, այս մեթոդի կողմնակիցները գտնում են ,որ ուղղագրության ուսուցման արդյունավետ եղանակը թելադրություն է :
- կանոնարկման մեթոդի համաձայն բառերի ուղղագրության մեկ ընդհանուր կանոնի ուսուցումն ու գործածությունը ճիշտ գրել սովորեցնելու արդյունավետ միջոց է:

Այս երեք մեթոդները կիրառելի են տարրական դասարաններում, սակայն ինչպես պնդում է Ջ. Գյուլամիրյանը՝ պետք է ճիշտ կերպով և տեղին որոշել դրանց կիրառման հաջորդականությունը: Գրաճանաչության շրջանում առավել արդյունավետ է գործում հնչյունային մեթոդը, քանի որ հիմնական աշխատանքն ուղղված է աշակերտների հնչյունային լսողությանը և այս ընթացքում ձևավորվում են նրանց վերլուծական-համադրական ունակությունները: Աշակերտների կողմից լեզվական տարրական գիտելիքների, սահմանումների ձևակերպումը խոսում է կանոնարկման մեթոդի կիրառման մասին: Այս ամենին զուգահեռ տարրական դասընթացի մայրենիի ծրագրում հաճախ կիրառվում է ճիշտ գրված բառերի ընդօրինակումը: Ինչպես ցանկացած նյութ ուսումնասիրելիս, այնպես էլ ուղղագրական կարողությունների ձևավորման և զարգացման գործնթացում պիտի առաջնորդվել՝ ուսուցման պարզից բարդը, ծանոթից անծանոթը գնացող սկզբունքով: ՈՒղղագրական հմտությունների ձևավորումն իրականացվում է ուղղագրական վարժությունների կատարման միջոցով, որոնք նպաստում են բառի ուղղագրության կանոնի տիրապետմանը, առանձին բառերի ուղղագրությունը մեկ կանոնի տակ տանելուն, կանոնը խոսքում կիրառելու կարողություններին:

Մեթոդաբանները առանձնացնում են ուղղագրական վարժությունների մի քանի տեսակներ, որոնք նման են քերականական վարժություններին, սակայն այլ է նրանց կատարման նպատակը :

ՈՒղղագրական վարժությունները լինում են՝

- նախապատրաստական՝ որոնք աշակերտներին նախապատրաստում են ուղղագրական նյութի ուսումնասիրմանը, նպաստում են լեզվամտածողության զարգացմանը,
- մարզողական վարժությունները կատարվում են հիմնականում բնագրերի շուրջ, այդպիսի վարժություններ են, օրինակ՝

ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերի ընդգծումը, դրանց դասակարգումը, կիրառումը,

- վերլուծական վարժությունները առնչվում են ուղղագրական գիտելիքները վերլուծելու, համադրելու ունակություններին: Վարժության այս տեսակի կիրառումը նպաստում է վերլուծական քննադատական մտածողության ձևավորմանը: Ա. Տեր-Գրիգորյանը նշում է. որ վերլուծական վարժությունները պետք է տրվեն պատրաստի և կատարվեն ուսուցչի առաջադրած ձևով ,
- կիրառական վարժությունների նպատակը ձեռք բերած ուղղագրական գիտելիքները գործնականում կիրառելն է, այն ինքնաստուգման անփոխարինելի միջոց է:
- հնչյունային վարժությունները կատարվում են և՛ գրաճանաչության ընթացքում, և՛ գրաճանաչության ավարտից հետո: Վարժությունների այս համակարգը իրականացվում է ուղղագրական և ուղղախոսական վերլուծությունների ժամանակ, երբ ի հայտ են գալիս գրության և արտասանության տարբերություններ:

Վարժությունների այս տեսակները իրացվում են արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների միջոցով: Դրանց կատարումը նպաստում է խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը և գրավոր խոսքի զարգացմանը, ուղղագրական գիտելիքաների ամրակայմանը:

## 3. Ուղղագրության ուսուցումը որպես կրտսեր դպրոցականների գրավոր խոսքի զարգացման միջոց

Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է երկու բաժինների լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ, որոնք մատուցվում են համակցված ձևով, ընթերցանության կիրառմամբ: Լեզվական համակարգի ուսումնասիրմանը միտված առաջադրանքների մեծ մասը (հատկապես թեմաներն ամփոփող) ուղղված են կապակցված բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Կարդալու և գրելու ուսուցումը միջոց են խոսքի զարգացման ծրագրային խնդիրների իրականացման համար: Տարրական դպրոցի մայրենիի առարկայական ծրագրում հատուկ տեղ է տրված կապակցված խոսքի ուսուցմանը, որը խոսքի զարգացման աշխատանքի վերջնական նպատակն է: Կապակցված խոսքի ստեղծումը,

որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, առաջին դասարանից սկսած թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ ու արժեք է ստանում:

Մայրենի լեզվի տարրական դասընթացում ուղղագրության ուսուցումը առանձին բաժնով նախատեսված չէ, սակայն վերջինս հանդիսանում է տարրական դասընթացի հիմնական խնդիրներից և ծրագրային պահանջ է: Տարրական դասարաններում ծրագրային նյութի յուրացումը, հետևաբար նաև ուղղագրության ուսուցումը իրականանում է պարուրաձև սկզբունքով (մշտապես վերադարձ անցած նյութին), ուղղագությունը միաձուլվում է Մայրենիի դասընթացի հետ և մատուցվում բնագրերին զուգահեռ՝ որոշակի ընդմիջումներով:

Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը ընդգրկում է ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների և բառերի քերականական ձևերի ուղղագրությունը, որոնք, ինչպես նշեցինք, որոշակի չափով՝ ըստ ուսումնական բեռնվածության, ներառված են Մայրենիի դասագրքերում:

Ըստ հայոց լեզվի ժամանակակից մեթոդիկայի ձայնավորների ուղղագրությունն ուսուցանվում է ավանդական սկզբունքներով, մեթոդիկան երաշխավորում է նաև ձայնավորների ուսուցումը սահմանումների և կանոնների տրմամբ :

Ըստ արտասանության և գրության համապատասխանության հայոց լեզվի ձայնավորները բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբն են կազմում այն ձայնավորները, որոնց գրությունը նույնությամբ համապատասխանում է արտասանությանը (ա,ի,ու): Մյուս խմբի մեջ մտնում են այն ձայնավորները, որոնց գրությունը և արտասանությունը երբեմն չեն համընկնում (է-ե, օ-ո, ը): Տարրական դասարանի Մայրենիի դասընթացը ընդգրկում է օ-ո ի է-ե ի, ը-ի, և-ի ուղղագրությունը բառասկզբում, բառամիջում և բառավերջում, նրանցով սկսվող բառերի ուղղագրությունը բարդման և ածանցման ժամանակ, ձայնավորների ուղղագրությունը տողադարձի ժամանակ:

Բառասկզբում ձայնավորների ուղղագրության ուսուցումը սկսվում է դեռևս գրաճանաչության շրջանում և զարգանում է երկրորդ դասարանում: Սկսած երկրորդ դասարանից ուսուցանվում է ձայնավորների ուղղագրությունը բառամիջում և բառավերջում, բառերի բարդման և ածանցման ժամանակ:

Ի տարբերություն ձայնավորների ուղղագրության ուսուցման, բաղաձայնների ուղղագրության ուսուցումը ընթանում է ընդօրինակման մեթոդով, առանց կանոնների և սահմանումների վկայակոչման :

Բաղաձայնների ուղղագրության ուսուցումն ընդգրկում է միաստիճան (մ, ն, յ, հ, լ), երկաստիճան (ղ-խ, զ-ս, ժ-շ, վ-ֆ) և եռաստիճան (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ) բաղաձայնների ուղղագրությունը, կրկնակ բաղաձայնների ուղղագրության դեպքերը:

ՈՒսումնասիրությունների համաձայն բաղաձայնների ուղղագրության ուսուցման արդյունավետ հնարներից մեկը բառի կազմության ուսումնասիրումն է, բառի բաղադրիչների իմաստի բացատրությունը,

նախադասության մեջ դրա օգտագործումը, որը նպաստում է ուղղագրական հմտությունների զարգացմանը :

Բառերի քերականական ձևերի ուղղագրությունը տարրական դասարաններում ներկայացնում է հատուկ անունների ուղղագրության դեպքերը, ուղղակի խոսքի ուղղագրությունը, թվականների ուղղագրությունը, հոգնակի թվով գործածված գոյականների ուղղագրությունը, օժանդակ բայերի և տողադարձի ուղղագրությունը:

ՈՒղղագրության քերականական ձևերը ուսուցանվում են գրաճանաչության շրջանում և կրկնվում ու խորացվում են ուսումնառության ողջ ընթացքում: Տարրական դասարաններում՝ մայրենիի գրեթե բոլոր դասաժամերին աշակերտները ծանոթանում են քերականական նոր իրողությունների: Որպեսզի աշակերտները ըմբռնեն քերականական ձևերի ուղղագրությունը, պետք է յուրաքանչյուր դասի ընթացքում նրանց ուշադրությունը հրավիրել բառերի գրության կանոնների վրա: Քերականական ձևերի սերտողության համար մեծ նշանակություն ունեն ստեղծագործական վարժությունները, որոնք կարող են պարունակել վերոնշյալ քերականական ձևերը:

Այսպիսով, տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը ընթանում է բացառապես գործնական եղանակներով՝ ուղղագրական վարժությունների և տարատեսակ գրավոր աշխատանքների միջոցով: Ուղղագրական գիտելիքների զարգացմանը նպաստում են ուղղագրության շուրջ կատարվող գրավոր աշխատանքները:

## 4. **Ուղղագրական սխալները, որպես ուսումնական դժվարություններ, դրանց հաղթահարման ուղղիները**

Ուսումնական գործունեությունը երեխայի կյանքի կարևոր մասն է կազմում, այն բարդ գործընթաց է և ուսուցիչներից պահանջում է հետևողականություն և համառ աշխատանք: ՈՒսումնական գործունեության ընթացքում առաջանում են բազում դժվարություններ, պայմանավորված կրտսեր դպրոցականների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Ուսումնական դժվարությունները կարող են արտահայտվել երկու ձևով՝ առաջինը հենց բուն ուսումնական

առանձնահատկությունների խնդիրներն են, այսինքն՝ երեխան ձախողում է կոնկրետ առարկայի շրջանակներում, չի կարողանում ընկալել, յուրացնել, դժվարանում է կատարել հանձնարարությունները, հասկանալ, բացատրել իր մտքերը: Երկրորդ խնդիրը անձնային որակների դաշտից է, այսինքն՝ երեխայի մոտ կարող է դրսևորվել ինքնուրույնության պակաս, նախաձեռնողականության պակաս, հրահանգներով աշխատելու կարողության պակաս կամ ենթարկվելու դժվարություններ :

Նշեցինք որ, ուղղագրության ուսուցումը բարդ և աշխատատար գործընթաց է, ուստի այդ ընթացքում ևս ի հայտ են գալիս բազում խոչընդոտներ և դժվարություններ::

Եթե աշակերտը տարբերակում է բառի հնչյունները, ճիշտ է արտաբերում դրանք,այսինքն՝ ունի զարգացած հնչյունային լսողություն և վերարտադրման կարողություն, ուրեմն՝ նա նշանակալիորեն դյուրինությամբ կհաղթահարի ուղղագրության ուսուցման գործընթացում ծագած դժվարությունները :

Աշակերտների գրավոր աշխատանքներում հանդիպող ուղղագրական սխալները ուղղագրական հմտությունների մշակման խոչընդոտներ են և հետևապես նաև ուսումնական դժվարություններ:

Հայտնի է, որ ուղղագրությունը սահմանվում է գրական լեզվի համար, ելնելով հայերենի գրային համակարգի առանձնահատկությունից, գրավոր աշխատանքներում հանդիպող ուղղագրական սխալները դասակարգվում են ըստ հնչյունական, ավանդական, քերականական և բարբառային տիպերի :

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականները հաճախ թույլ են տալիս հնչյունական և ավանդական սխալներ, մասամբ՝ քերականական, երբեմն՝ բարբառային տիպի ուղղագրական սխալներ: Գրավոր աշխատանքներում սխալներ կատարելը պայմանավորված է աշակերտների ուշադրության, հիշողության, ընկալման, մտածողության տարիքային առանձնահատկություններից:

Տարրական դասարանների աշակերտների գրավոր աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշակերտները բառի գրության մեջ տառ են բաց թողնում (գուղ-գյուղ, պածառ-պայծառ), բառի մեջ ավելորդ տառ են գրում (ընկույզենի-զընկուզենի, արտտագրություն-արտագրություն), երբեմն ճիշտ արտասանվող հնչյունը սխալ են գրում (ուսուչիչ-ուսուցիչ, անբողջ-ամբողջ, Սեկտեմբեր-Սեպտեմբեր): Թվարկված դեպքերը տիպիկ հնչյունական սխալներ են:

Ավանդական ուղղագրական սխալներ են համարվում այն դեպքերը, երբ բառի արտասանությունը և գրությունը չեն համապատասխանում և դրա հետևանքով տեղի է ունենում բառի սխալ գրություն: Գրավոր աշխատանքներում հանդիպում են ավանդական գրություն ունեցող բառերի հետևյալ սխալները՝ որդի-որթի, առաջ-առաչ, կարագ-կարաք, հանկարծ-հանկարց: Գրավոր աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կրտսեր դպրոցականները ավանդական և հնչյունական ուղղագրական սխալներ թույլ են տալիս տարբեր գրավոր աշխատանքներ կատարելիս:

Քերականական սխալներ են համարվում բառերի քերականական ձևերի սխալ գրությունները: Տարրական դասարաններում աշակերտները թույլ են տալիս բառակազմության սխալներ (ընկուզենի-ընկույզենի), տողադարձի սխալներ (սով-որել, մասըն-ակցել), հատուկ անունների գրության սխալները (արարատ, մասիս), խոսքի մասերի գրության սխալներ (միուս-մյուս, երորդ-երրորդ, իմ գիրքս-գիրքս,իմ գիրքը, կարդալույեր-կարդալու էր):

Բարբառային սխալները կատարվում են գրական լեզվի՝ բարբառների համեմատ ունեցած որոշ հնչյունական և քերականական տարբերությունների պատճառով: Բարբառային սխալները որոշ դեպքերում կարելի է համարել նաև հնչյունական սխալներ, քանի որ դրանք առաջ են գալիս աշակերտի բարբառի և գրական լեզվի միջև եղած տարբերություններից: Կրտսեր դպրոցականները բարբառային սխալներ թույլ են տալիս հատկապես շարադրություն գրելիս:

Բարբառային սխալները թույլ չտալու համար անհրաժեշտ է նախ աշխատանք տանել բանավոր խոսքում դրանք սահմանափակելու ուղղությամբ: Ընթերցանության ժամանակ պետք է հետևել, որ աշակերտները հնարավորինս անսխալ կարդան բնագրերը, բնագրերի վերարտադրման ժամանակ խուսափեն բարբառային բառերի օգտագործումից: Այս պարագայում պետք է ստեղծել պայմաններ, որ աշակերտները շատ լսեն գրական խոսք, դա կարող է ապահովել ուսուցիչը կիրթ և գրագետ խոսք մատուցելով աշակերտներին: Ցանկալի է պարբերաբար դասերի ընթացքում աշակերտներին ունկնդրել տալ գրական ստեղծագործությունների ձայնագրություններ և աշակերտների ուշադրությունը հրավիրել բառերի արտասանության վրա, 2-3 անգամ պետք է կրկնել տալ այդ ստեղծագործությունները, ցանկալի է, որ ընտրված ձայնագրությունը համապատասխանի օրվա պլանով նախատեսված դասի թեմային, տպավորությունը առավել ընդգծելու համար: ՈՒնկնդրումից հետո պետք է թելադրել առանձին բառեր, որոնք ուղղախոսական և ուղղագրական դժվարություններ են հարուցում: Պետք է հետևել, որ աշակերտները հնարավորինս ճիշտ գրեն թելադրված բառերը:

Բարբառախոսությունից գրական խոսքին անցնելու համար անհրաժեշտ է խրախուսել, որ աշակերտները անկաշկանդ մթնոլորտում ձևավորեն կապակցված խոսք, ազատ լինեն մտքերը արտահայտելիս: Կրտսեր դպրոցականների կապակցված խոսք կառուցելու կարողության հաջողությունները նպաստում են գրական խոսքի արտահայտման և ուղղագրական գրագիտության ձևավորմանը: Ջ.Գյուլամիրյանն աշակերտներին ակտիվ խոսքային գործունեության մեջ ներգրավելու խնդրի արդյունավետ լուծումը տեսնում է դասարանում վստահելի, անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու, ինչպես նաև յուրաքանչյուրի խոսքի իրավունքը հարգելու մեջ:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտների ուղղագրական հմտությունների զարգացմանը մեծապես նպաստում են բառակազմական աշխատանքները: Բառի բաղադրիչների իմաստի բացատրությունը և դրանց օգտագործումը նոր բառեր կառուցելիս, նպաստում են աշակերտների ուղղագրական

հմտությունների, վերլուծման և համադրման կարողությունների զարգացմանը: Բառի բաղադրիչների օգտագործումը այլ բառեր կազմելիս աշակերտին օգնում է տեսնել բառի ուղղագրությունը տարբեր դիրքերում: Այսպիսի աշխատանք հնարավոր է իրականացնել այն ժամանակ, երբ աշակերտները արդեն ծանոթ են բառերի բարդման և ածանցման դեպքերին:

Ուղղագրությունը ճշտելու օգտակար մեթոդական հնար է բառի թեքումը: Թեքումը բառի քերականական ձևերի կազմությունն է՝ բառի ներքին փոփոխությամբ կամ վերջավորության ավելացմամբ: Նման պահանջ առաջանում է հատկապես թելադրություն գրելու ժամանակ, երբ լսված բառի ուղղագրությունը տարակուսանքի առիթ է հանդիսանում: Պետք է մշակել այնպիսի կարողություններ, որ աշակերտը կարողանա անհրաժեշտության դեպքում կատարել բառի ձևափոխություն բառարմատի պահպանմամբ:

Կրտսեր դպրոցականները հաճախ սխալներ են թույլ տալիս հարանունների գրության ժամանակ: Հարանուն բառերի քանակը տարրական դասարաններում սահմանափակ է, օրինակ՝ թռչել-թրջել, կրունկ-կռունկ, մարտ-մարդ, հարթ-հարդ, թանկ-տանկ: Գրեթե նույն արտասանությունն ունեցող բառերի և՛ ուղղագրական և՛ իմաստային ճիշտ արտահայտությունը պահպանելու համար օգտակար է նման բառերի բազմակի օգտագործումը արտագրությունների ժամանակ, աշակերտը պետք է հաճախ տեսնի բառապատկերը, հաճախ գրի այն: Աշակերտներին պետք է հրահանգել բառը նախադասության մեջ օգտագործելիս ուշադրություն դարձնել նախադասության իմաստին, ըստ այդմ գրել ճիշտ բառը: Սակայն գրավոր աշխատանքների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ աշակերտները կրկին շփոթում են բառի ուղղագրությունը և իմաստը: Գրության նմանություններ ունեցող բառերի սերտման համար օգտակար է դասարանը ապահովել համապատասխան պաստառներով, որոնցում բառը կցուցադրվի նկարազարդման միջոցով: Պաստառների պատրաստումը կարելի է վստահել աշակերտներին, հանձնարարել նկարել կամ համակարգչի միջոցով ձևավորել, օրինակ՝ հորդ և հորթ, թռչել և թրջել, կռունկ և կրունկ բառերը պատկերների միջոցով: Այսպիսի աշխատանքը կխթանի հարանուն բառերի իմաստների ճիշտ գործածությանը գրավոր խոսքում:

ՈՒղղագրական կանոնների վերաբերյալ աշակերտների գիտելիքներն ամրակայելու եղանակներից մեկը ուղղագրական քարտերով աշխատանքն է, որը ցույց է տալիս աշակերտի ինքնուրույն աշխատանք կատարելու հնարավորությունները: Ուղղագրական քարտերի բովանդակությունը պետք է համապատասխանի տարրական դասարանի աշակերտի գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակին: Քարտերով աշխատանքի կատարումը առավել օգտակար է անցած ուղղագրական գիտելիքների կրկնության և ամրակայման ժամանակ: ՈՒղղագրական քարտերով աշխատանք կազմակերպելու համար աշակերտների միջև քարտերը բաշխում ենք ըստ տարբերակների ապահովելով, որ կողք-կողքի և հետ ու առաջ նստած աշակերտների մոտ տարբերակները չկրկնվեն:

Այսպիսի բաժանումը նվազեցնում է, միմյանցից արտագրելու հնարավորությունները և ապահովում է հնարավորինս ինքնուրույն

աշխատանք: Ինքնուրույն կատարված աշխատանքը ուսուցչին հնարավորություն է ընձեռում բացահայտելու աշակերտի կարիքները ուղղագրության նկատմամբ:

Ժամանակակից ուսուցման համակարգում Մայրենիի դասի անցկացման ընթացքում հաճախ օգտագործվում են ուղղագրության ուսուցման օժանդակ միջոցներ, ուղղագրական բառգրքույկներ: Անհրաժեշտ է հետևել, որ աշակերտները կարողանան արդյունվետ օգտվել այդ միջոցներից: Պետք է գրավոր աշխատանքների կատարման ընթացքում կարևորել բառգրքույկներից օգտվելու հմտությունների զարգացումը:

Խոսքի զարգացման, գրելու հմտությունների ամրակայման, ինչպես նաև ուղղագրական նյութը ընկալելի դարձնելու և հնարավոր սխալները կանխելու համար կիրառելի են խաղ-վարժությունները: Սրանց նպատակը աշակերտների հիշողության, ուշադրության, երևակայության զարգացումն է: Խաղային մեթոդներով ուղղագրության շուրջ տարվող աշխատանքը նպաստում է նյութի հանդեպ հետաքրքրության աճին, զերծ է պահում գրավոր աշխատանքների միօրինակությունից: Խաղ-վարժությունների ժամանակ աշակերտները դրսևորում են բարձր ակտիվություն, անկախ նյութի յուրացման աստիճանից: Այսպիսի վարժանքներ կարելի է պարբերաբար կատարել Մայրենիի դասի ժամանակ, հաշվի առնելով անցկացման նպատակահարմարությունը:

Ժամանակակից ուսուցման համակարգում համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի ներդրումը, խմբային մեթոդով գրավոր աշխատանքների կազմակերպումը խթանում են սովորողների գիտելիքների, կարողությունների, համագործակցային հմտությունների մակարդակի բարձրացմանը: Խմբային աշխատանքները դրական են ազդում երեխաների բառապաշարի զարգացման վրա: Աշակերտները սովորում են լսել միմյանց, կարծիքներ փոխանակել, հնարավոր տարբերակներից փնտրել և ընտրել ճիշտը: Ձևավորվում է միմյանց օգնելու պատրաստակամություն, արդյունքում այս մեթոդով աշխատանքները բացի ուսումնական խնդրիներից լուծում են նաև կոլեկտիվի ձևավորման խնդիրներ: Խմբային աշխատանքները գնահատելիս անհրաժեշտ է դիտարկել խմբի ակտիվության, համագործակցության աստիճանը: Խմբային աշխատանքներ կարելի է կազմակերպել նոր նյութի հաղորդման, գիտելիքների ստուգման ու ամրակայման, թեմայի ամփոփման դասերին: Դիտարկելով խմբային մեթոդով գրավոր աշխատանքների անցկացման նպատակահարմարությունը, գտնում ենք, որ Մայրենիի դասի լեզվական առաջադրանքները, ինչպես նաև գրավորի առանձին տեսակներ կարելի է կատարել խմբային մեթոդով: Ճիշտ և նպատակային կազմակերպված խմբային աշխատանքի կազմակերպումը և անցկացումը նպաստում է կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտություններ զարգացմանը:

Ինչպես տեսանք, ուսումնական գործընթացը լի է բազում խոչընդոտներով, որոնք պայմանավորված են կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությամբ:

- Աշակերտների կատարած ուղղագրական սխալների պատճառները կապված են այս տարիքին բնորոշ հոգեբանական, բնախոսական առանձնահատկություններից: Ուղղագրության ուսուցման ժամանակ լուրջ ուշադրություն պետք է դարձնել սխալները կանխելու խնդրին: Վերոշարադրյալ չորս տիպի ուղղագրական սխալները կանխելու համար անհրաժեշտ է գործադրել տարբեր մեթոդներ, հաշվի առնելով աշակերտների առանձնահատկությունները: Միօրինակ, կրկնվող աշխատանքները ոչ միայն չեն նպաստում սխալը վերացնելուն, այլև նույն սխալը կատարելու առիթ են հանդիսանում: Ցանկացած առաջադրանք պետք է հետաքրքրություն հարուցի, նոր գիտելիքներ ստանալու առիթ հանդիսանա: Պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ աշակերտն ինքը գիտակցի իր սխալը, բացթողումը, այնուհետև նոր աշխատել սխալը կանխելու ուղղությամբ: Անհրաժեշտ է բացատրել, ցուցադրել, հիմնավորել, գործնական մեթոդներ կիրառել, որոնք ավելի արդյունավետ են դարձնում ուսուցումը: Նման մոտեցումը հանգեցնում է սովորողների ընդհանուր զարգացմանը:

## 5. Տարրական դասարաններում ուղղագրան սխալների, դրանց կանխման նպատակների հետազոտություն

- Մեթոդների ընտրություն
- Աշխատանքների նկարագրություն

Հետազոտական աշխատանքի տեսական վերլուծության արդյունքները գործածելու նպատակով աշխատանքը կներկայացնեմ փուլերով

- Արձանագրող փուլ

Ժամանակակից տարրական դպրոցի ոչ բոլոր ուսուցիչներն են լիովին օգտվում ուսուցման մեթոդների լայն հնարավորությունից: Գրավոր աշխատանքի անցկացման ընթացքը՝ մասնավորապես ուղղագրության շուրջ տարվող աշխատանքները աշակերտների ընդհանուր առաջադիմության մակարդակը պայմանավորում են ուսումնառության ընթացիկ արդյունքները, դասի ընթացքում ցուցաբերված ակտիվությունը, գրավոր աշխատանքներին ներկայացվող չափանիշների պահպանումը:

Հաշվի առնելով ժամանակակից ընթացիկ գնահատման գործառույթները և սկզբունքները, թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքները նախընտրում են անցկացնել թելադրությամբ, հավաստելով, որ գրավոր աշխատանքները թելադրությամբ անցկացնելը աշակերտի գրելու կարողության լավագույն չափանիշն է հանդիսանում:

Թելադրություն գրելիս աշակերտները գործնականում կիրառում են ձեռք բերած ուղղագրական, քերականական և կետադրական գիտելիքները: Հենց այս գրավոր աշխատանքներից ստացած միավորը մեծ ազդեցություն ունի աշակերտի ուսումնական կիսամյակային առաջադիմության վրա:

Տարրական դասարաններում գրավոր աշխատանքները հաճախ տրվում են արտագրությունների միջոցով, որոնք հիմնականում ստեղծագործական բնույթի են: Նմանատիպ գրավոր աշխատանքները իրականացվում են նախ ուսուցչի ընթերցանությամբ, պարզաբանմամբ, ապա կատարվում է լեզվական նյութի կրկնություն, տրվում են ցուցումներ գրելու տեխնիկական կողմի ապահովման վերաբերյալ, կատարվում է գրավոր աշխատանքի ընթացքը, ավարտելուց հետո՝ աշխատանքի ներկայացում:

Պարզ է, որ հաճախ գրավոր աշխատանքներում սխալներ կատարում են այն աշակերտները, որոնք ունեն ցածր կամ միջին առաջադիմություն:

Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները միայն որոշ դեպքերում են սխալ գրում, մասնավորապես, երբ բառի գրությունը ծանոթ չէ կամ բառը սխալ է վերարտադրվում:

Տարբեր պատճառներով տարրական դպրոցի ուսուցիչը լիովին չի օգտվում ուսուցման մեթոդների լայն հնարավորությունից:

Արդյունքում գրավոր աշխատանքները անցկացվում են որպես չափորոշչային պահանջ, իսկ աշխատանքի ստուգումը և որոշումը կատարվում է օրինակ՝ սխալ գրված բառը տողատակում գրելու միջոցով, որը աշակերտիից պահանջում է նույն բառի բազմակի մեխանիկական արտագրություն կամ բառերի ուղղագրության համար կիրառվում են բառատետրեր, բառագրքույկներ:

Տարրական դասարաններում աշակերտների թույլ տրված ուղղագրական սխալները գրավոր աշխատանքներում մեծամասամբ ավանդական և հնչյունական սխալներ են: Որոշ գրավոր աշխատանքներում թույլ են տրվում քերականական սխալներ: Բուն բարբառային սխալները քիչ մաս են կազմում:

Սակայն հաշվի առնելով, որ սովորողները խոսում են Բայազետի բարբառով, հնչյունական սխալների որոշ ձևեր կարելի է վերագրել բարբառային տիպին:

Բարբառային տիպի սխալների դասակարգման համար հիմք է հանդիսացել Վ. Կատվալյանի աշխատությունը, որում հանգամանորեն տրվում են Բայազետի բարբառի լեզվական առնչությունները գրական լեզվի համեմատ:

Ուղղագրական սխալների օրինակները տես աղյուսակ 1-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

| | ՍԽԱԼ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ | ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|---|
| ԱՎԱՆԴԱԿԱՆ | արցակուրթ, արձակուրթ<br>արաչին, առաչին,<br>որթի, վորթի<br>բերորթի, բեռորթի,<br>թուջել,<br>համփերել, հանփերել<br>անպ, ամբ<br>ոսկեզոծ, վոսկեզոծ | Արձակուրդ<br>առաջին<br>որդի<br>բեռորդի<br>թրջել<br>համբերել<br>ամպ<br>ոսկեզօծ |
| ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ | Երաբտական<br>աբխհար<br>Գումրի<br>միյայն<br>յուրբընկալ<br>ընկուզ<br>սեկտեմբեր | Երաժշտական<br>աբխարհ<br>Գյումրի<br>միայն<br>հյուրընկալ<br>ընկույզ<br>սեպտեմբեր |
| ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ | Ընկերի<br>ասեց<br>տետրտ<br>իմ գիրքս<br>երկաթ է դուռ<br>ուզումեյին<br>ամենալավագույն | Ընկերոջ<br>ասաց<br>տետրդ<br>գիրքս<br>երկաթե դուռ<br>ուզում էին<br>ամենալավ |
| | Դայլին<br>բուր<br>ախճիկ | Դահլին<br>բույր<br>աղջիկ |

| | | |
|---|---|---|
| ԲԱՐԲԱՌԱՅԻՆ | ինձի (ընձի)<br>եխպայր (ախպեր)<br>մանդր | ինձ<br>եղբայր<br>մանր |

Աշակերտների ուղղագրական գիտելիքները պարզելու և ուղղագրական սխալների շուրջ հետագա տարվող աշխատանքները կազմակերպելու համար նպատակահարմար եմ համարում կիրառել կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստեր, որոնց անցկացումը հնարավորություն է ընձեռնում պարզելու ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումները և բացթողումները ուղղագրական գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ: Գիտելիքների թեստային հայտորոշումը ուսումնական գործընթացում ապահովում է հետադարձ կապ և նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Հայտորոշիչ թեստ III դասարանի համար

**[Ավելված *1]*:**

Թեստը բաղկացած է *5* կետից, յուրաքանչյուր առաջադրանք ընտրված է հաշվի առնելով ուղղագրության վերաբերյալ աշակերտների ձեռք բերած գիտելիքները:

Նախքան թեստի անցկացումը, բանավոր հարցման միջոցով կրկնեցինք բաղաձայնների և ձայնավորների ուղղագրությունը:

Աշակերտները հնարավորինս ինքնուրույն պետք է կատարեն աշխատանքը:

Աշխատանքները ստուգելուց հետո աշակերտները ներկայացրեցին ուղղագրական նյութի յուրացման մակարդակն ըստ թեստի արդյունքների:

Հաջորդը աշխատանքների կատարման ձևավորող փուլն է :

Այս փուլի նպատակն էր կատարել կատարել ուղղագրական հմտությունների զարգացման, ուղղագրական սխալների կանխման ուղղված գործնական աշխատանքներ:

Այնուհետև նախաձեռնեցի փորձարարական աշխատանքների շղթա, որի իրագործումը իմ կարծիքով հնարավորինս կնպաստի ուղղագրական գիտելիքների ամրակայմանը, ուղղագրական սխալների պատճառների որոշմանը և հնարավոր կանխմանը:

Ուղղագրության շուրջ տարվող աշխատանքը նախընտրեցի կազմակերպել խմբային մեթոդով: Յուրաքանչյուր խմբում ներգրավեցի ուսումնական նյութը տարբեր մակարդակներով յուրացրած աշակերտների: Աշխատանքն իրականացվեց համագործակցային ուսուցման տարրերի ներդրումով ՝ այն է խմբում միմյանց օգնելու, աջակցելու մթնոլորտի, համագործակցություն, վստահություն, ընդհանուր նպատակադրում:

Խմբային մեթոդով գրավոր աշխատանքների ժամանակ կիրառվել են խաղ-վարժություններ, ուղղագրական քարտեր: Հանձնարարվել է տարատեսակ աշխատանքներ, գրական խոսքի ունկնդրումներ՝ ձայնագրությունների միջոցով: Որպեսզի ուղղագրության շուրջ տարվող աշխատանքները չընթանան միօրինակ և ձանձրույթ չպատճառեն սովորողներին, գրավոր աշխատանքների նախապատրաստման և անցկացման ընթացքում ներառվում են

խաղ-վարժություններ, կազմակերպվում է հանելուկների գուշակում, որոնք հետաքրքրություն են առաջացնում աշակերտների շրջանում:

- Խաղ ձայնավորների ուղղագրության ամրապնդման համար:

Շարժական տառերի միջոցով պետք է հավաքել բառեր; բաց թողնելով ձայնավորները, աշակերտից պահանջվում է ընտրել ձայնավորը և հավաքել բառը:

**Օրինակ՝**

Ս-Ր-Մ-ՐԳ

-Ս-Ղ-Չ

Մ-Լ-ՐՎ-Լ

-ՍԿ-Ձ-Ծ

Նմանատիպ ուղղագրական խաղ-վարժություններից են նաև «Գտի՛ր սխալը», «Հրաշալի պարկը», «Հմուտ որսորդը», «Հարցի պատասխանը գտի՛ր»: Աշակերտների հիշողությունն ու ուշադրությունը զարգացնելու համար անցկացվում է այսպիսի վարժություն:

Գրատախտակին գրված է ուղղագրական դժվարություն ներկայացնող բառաշարքեր: Հանձնարարվում է կարդալ և մտապահել բառերը:

Բառերը ծածկելուց հետո աշակերտները պետք է դրանք վերարտադրեն նախ բանավոր ապա գրավոր: Այս վարժանքի ժամանակ պետք է հետևել աշակերտների կողմից բառերի ճիշտ արտասանությանը և գրությանը:

- Խմբային աշխատանքի մեթոդով աշխատելու ժամանակ պետք էր գրել կապակցված տեքստ, բանալի բառերի և համապատասխան նկարազարդման տրմամբ: Նկարազարդումները ընտրվում է դասագրքերից կամ այլ աղբյուրներից, որոնք պետք է լինեն իրավիճակային: Այս աշխատանքի կատարման ընթացքում աշակերտները օգտագործում են իրենց բառապաշարը, հետևելով նկարազարդմանը: Աշակերտները գրառում են ցանկացած միտք, համակարգում դրանք, վերնագրում տեքստը:

***[Ավելված 2]*:**

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուղղագրական խաչբառների կիրառումը:

**Օրինակ՝**

Նախապես պաստառի միջոցով ցուցադրվում է խաչբառի կաղապարը, տրվում է ցուցումներ, ցուցադրվում անհրաժեշտ բառերը: Աշակերտներից պահանջվում է լրացնել խաչբառը, ուշադրություն դարձնելով բառերում տառերի դասավորությանը, բառերի ուղղագրությանը:

***[Ավելված 3]*:**

Ուղղագրական քարտերով աշխատանքները անցկացվում են ինչպես տարբերակված, այնպես էլ խմբային աշխատանքներ կատարելիս: Քարտային աշխատանքները նպաստում են աշակերտների ուղղագրական,

բառակազմական հմտությունների ամրապնդմանը, բառապաշարի հարստացմանը:

Քարտային աշխատանք կատարելու համար ընտրվում և խմբերին բաժանվում են ուղղագրական դժվարություն ունեցող բառաշարքերով քարտեր, որոնք պարունակում են տարբեր առաաջադրանքներ: Քարտերի միջոցով կատարվող հնչյունաբանական, բառակազման աշխատանքի կատարումը թույլ է տալիս ուղղագրական դժվարություն ներկայացնող բառը դիտարկել տարբեր դիրքերում, գտնել բառի ճիշտ գրությունը:

**[Ավելված *4*]:**

Մեկ այլ բառախաղի առաջադրանք:

Նախ դասագրքից ընտրվում է բնութագրի հատված, հատվածից ընտրվում է բարդ և ածանցավոր բառերը, ընտրված բառերը գրի է առնվում, որից հետո պետք է դասակարգել աղյուսակով ՝ ցույց տալով արմատը, ածանցը հոդակապը, ապա ընտրել մի քանի բաղադրիչներ և կազմել նոր բառեր

**[Ավելված *5*]:**

- Ուղղագրության գիտակցական յուրացման արդյունավետ միջոց է գրավոր աշխատանքի հետևյալ ձևը: Գրավոր աշխատանքներում թույլ տրված ուղղագրական սխալների դեպքում սխալ գրված բառն ընդգծվում է (նախընտրելի կանաչ գույնով), իսկ լուսանցքում գրվում է, թե որ կանոնի համաձայն է գրված, իսկ աշակերտը տվյալ տողում պետք է գտնի թույլ տրված սխալն այդ կանոնի համաձայն

  **Օրինակ՝** աշակերտը գրել է հանրոգուտ-հանրօգուտ: Այս դեպքում գրվում է կամ նշվում ՝ օ-ն բառամիջում առանց ընդգծելու:

  Տրվում է այսպիսի աշխատանք զույգերով: Թելադրությամբ գրում են 10-15 բառ: Հետո զույգերը փոխանակում են տետրերը ու ստուգում միմյանց սխալները:

  Գրավոր աշխատանքների կատարման ընթացքում աշակերտները հաճախ են սխալներ թույլ տալիս իմաստով տարբեր, բայց գրեթե նույն արտասանություն ունեցող բառերի գրության ժամանակ: Այս դեպքում կազմակերպվում է գործնական աշխատանքներ, կատարվում բառի համապատասխանեցում նախադասության իմաստի հետ:

  Բառապատկերի մտապահման և սխալներից խուսափելու համար աշակերտներին հանձնարարվում է կրունկ և կռունկ, հորթ և հորդ, բարկ և բարակ բառերը ներկայացնել պատկերների միջոցով (համակարգչային գրաֆիկայի օգնությամբ):

  Նկարազարդումների միջոցով գրեթե նույնահունչ բառերի ուղղագրության ուսուցումը նպաստում է բառի իմաստի ընկալման և սահմանափակում հնարավոր ուղղագրական սխալները:

  Նպաստում է խմբում համագործակցության բարձրացմանը, հետաքրքրություն է առաջացնում վարժության նկատմամբ:

**[Ավելված *6*]:**

Աշակերտների խոսքի մշակույթի ձևավորման, հնչյունային լսողության զարգացման, բարբառախոսությունից գրական խոսքին անցնելու համար կատարվում են գրական խոսքի ունկնդրումներ ձայնագրությունների միջոցով

աշակերտների ուշադրությունը հրավիրելով ասմունքողի արտասանության վրա: Այստեղ խնդիրը, ոչ թե բարբառախոսության սահմանափակումն է, այլ բարբառով խոսող աշակերտներին գրական արտասանությունը վարժեցնելը և հնարավորինս կանխելը բարբառային գրության տարբերակները:

Այդ նպատակով սովորողները ունկնդրում են ծանոթ բանաստեղծությունների ձայնագրություններ, ունկնդրումից հետո հանձնարարվում է գրի առնել նոր սովորած բառերը, ընդգծել ուղղագրությունը:

Ուղղագրական գիտելիքների մակարդակը ստուգելու լավ միջոց է նաև ինքնաթելադրությունը, որը զարգացնում է նաև կամքը, սովորեցնում է կառավարել սեփական մտքերը, գործողությունները:

Ինքնաթելադրության ստուգումը հանձնարարվում է աշակերտներին նաև ինքնաստուգում կատարելով, այնուհետև կատարելով փոխադարձ ստուգում: Գրավոր աշխատանքների ինքնաստուգումը նպաստում է հնարավոր ուղղագրական սխալների ընդգծմանը և հետագա կանխմանը:

Փոխադրության միջոցով կատարվող գրավոր աշխատանքը լավագույնս արտացոլում է աշակերտի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը:

Որպեսզի փոխադրություն գրելու գործընթացը զարգացնի երեխայի կապակցված խոսք կառուցելու և այն գրի առնելու կարողությունը, աշակերտը պետք է հասկանա և զգա դեպքերի տրամաբանական կապերը և «իր բառերով» վերարտադրի:

Փոխադրության անցկացում /// դասարանում
Հետևյալ մեթոդական շղթայով `

1) Կատարվեց բնագիր առաջին ընթերցում
2) Զրույց բնագիր բովանդակության շուրջ
3) Ուղղագրական դժվարություններ ներկայացնող բառերի բացատրություն
4) Հարցաշարի կազմում աշակերտի օգնությամբ
5) Բնագիր շարադրում հարցերի միջոցով
6) Փոխադրության նյութի գրավոր կատարում
7) Փոխադրության ինքնաստուգում
8) Աշխատանքի հանձնում

***[Հավելված 7]*:**

Ամփոփիչ ստուգում հարցարանի միջոցով, որի նպատակը ձեռք բերած ուղղագրական գիտելիքների համակարգումն է նախորդ փուլում օգտագործված հնարների՝ ուղղագրական սխալների կանխման նկատմամբ արդյունավետության դիտարկում:

Ամփոփիչ հարցարանը ընդգրկում է 8 տարբեր առաջադրանքներ, որոնք վերաբերվում են գրության և արտասանությանը համապատասխանություն ունեցող բառերի ուղղագրությունը (հնչյունական ուղղագրության) գրության և արտասանության տարբերություն ունեցող բառերի ուղղագրությունը

(ավանդական ուղղագրություն) հատուկ անունների, օժանդակ բայերի ուղղագրությունը, քերականական ուղղագրություն:

Բարբառային բառերի ուղղագրություն համար թեստում ներառվել է բարբառային բառերով տեքստեր և առաջարկվել այդ բառերը փոխարինել համարժեք գրական բառերով:

Այսպիսով հետազոտության ընթացքում կիրառված մեթոդական հնարների միջոցով 3-րդ դասարաններում ապահովվեց ուղղագրական սխալների կանխմանն ուղղված նկատելի դրական փոփոխություն:

# Եզրակացություն

- Ուսուցման մեթոդների բազմազանության ապահովման հարցը մայրենիի մեթոդիկայի մշտապես արդիական մնացող խնդիրներից է :

- Կրտսեր դպրոցականների գրավոր աշխատանքների համալիր ուսումնասիրությունը ուղղագրական սխալների որոշման նպատակով, թույլ է տալիս եզրակացնել, որ դասի ընթացքում կիրառված բացատրական-ցուցադրական աշխատանքները դրական շարժընթաց չեն ապահովում ուղղագրական սխալների շուրջ տարվող աշխատանքներում:

- Ուղղագրական սխալների կանխման նպատակով կատարված հետազոտության արդյունքներից եզրակացնում ենք, որ հնչյունային, ավանդական, քերականական, բարբառային տիպի ուղղագրական սխալները կանխելու համար անհրաժեշտ է գործածել տարբեր մեթոդներ, քանի որ միայն մեխանիկական արտագրությունները և թելադրությունները չեն կարող լիարժեք լուծել կրտսեր դպրոցականների ուղղագրական կարողությունների ձևավորման և այդ առումով նրա գիտակցության հարցը:

# Օգտագործված գրականություն


1. Աբեղյան Մ. Երկեր Ը. հատոր «Մեր ուղղագրության մասին» Երևան ՀՍՍՀԳԱ հրատ. 1985թ.

2. Գյուլամիրյան Ջ. «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա» Եր., «Զանգակ-97» 2006թ.

3. Կատվալյան Վ. , Բայազետի բարբառը և նրա լեզվական առընչությունները շրջակա բարբառների հետ, «Աստղիկ» հրատարակչություն, Երևան 2016թ.

4. Ղարիբյան Ա. Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիա, Հայպետհրատ, Երևան 1954թ.

5. Տիգրանյան Լ., Ուղղագրական սխալների տեսակներն ու դրանց շուրջ տարվող աշխատանքները, «Նախաշավիղ» գիտամանկավարժական հանդես 1. 2017թ.


**Համացանցային կայքեր**


1. հանրակրթական պետական չափորոշիչ. հավելված N 2

2. Սարգսյան Ս., Թեստը որպես ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման միջոց

# ՀԱՎԵԼՎԱԾՔՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ՕՐԻՆԱԿ III ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Բաց թողնված տեղում գրի՛ր o կամ ո:
   Ան-գուտ,
   Ձվարթն-ց,
   այս-ր,
   ան-րոշ,
2. Տրված բառերից, որի՞ գրությունն է սխալ, ընդգծի՛ր:
   Ամենաերկար
   Անորոշ
   Մեղմօրեն
   Ընդօրինակել

   Գրի՛ր ճիշտ տարբերակը ————————————
3. Տրված բառերից ո՞րն է համապատասխանում նախադասության իմաստին

   Գարնան առաջին ամիսը ———— է:
   - Մարդ,
   - մարտ

   Խաղողի ————— կախ էր ընկել ցանկապատից:
   - Որթ,
   - որդ

4. Ո՞ր նախադասության մեջ ուղղագրական սխալ կա:
   - Ծաղիկները դանդաղ արթնացան գիշերային քնից:
   - Սարգիսն անհամբեր սպասում էր արևաածագին:
   - Ընդարցակ այգիները ծածկվել են երփներանգ ծաղիկներով:
5. Տրված բարդ բառերից ո՞ րնէ կազմվում որակ արմատով:

   - Բանվորական
   - Անորակ
   - Սովորական

- Այլմոլորակային

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Նկարի շուրջ հորինել և գրել պատմություն, օգտագործելով անտառ, զարմանալ. թախիծ, զվարճանալ բառերը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Պահանջվում է ըստ կաղապարի և լրացրած բառերի լրացնել մնացած բառերը:

Խաչբառի բառաշարքը,
Ամպ
Հյուր
Մորուք
Աղքատ
Ողկույզ
Կրակ
Սունկ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մ | | | | | | |
| | | Ո | Ղ | Կ | Ու | Յ | Զ | |
| | | Ր | | | | | | |
| | | Ու | | | | | | |
| | | Ք | | | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՐՈՎ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ՏԱՐԲԵՐԱԿ I

Բաց թողնված տեղում գրել գ կամ ք: Կազմել նախադասություններ և գրել:
Սանդուղ-օ-ուտ
Կարա- թա-ուհի
Եր-շ-երթ
Վար- մր-առատ

ՏԱՐԲԵՐԱԿ II
Տրված բառերով կազմել մեկական բարդ և ածանցավոր բառ:
Վերջ, բերք, երանգ, վարձ, բախտ, օրենք:

ՏԱՐԲԵՐԱԿ III
Տեքստից դուրս գրել հատուկ անունները:
Օգսենը ծնվել է Օձունում: Դպրոցն ավարտելուց հետո նա ուսումը շարունակեց Օդեսայի օդային ուսումնարանում: Այսօր՝ կեսօրին, Օգսենը Օդեսայից գալու է Երևան: Օֆելյան յուրօրինակ հպարտությամբ է սպասում իր օդաչու եղբորը: Օֆելյան ու Օնիկն Օգսենին դիմավորեցին «Զվարթնոց» օդանավակայանում:

ՏԱՐԲԵՐԱԿ IV
Բառերը դասավորել համապատասխան շարքերով, ընդգծել այն բառերը, որոնց գրության և արտասանության միջև տարբերություն կա:
Միրգ, երանգ, դեղձ, խուրց, ջինջ, սլաք, ամպ, երթ, խիղճ, ողբ, իջնել, որթ, հարթ, արտ, աղջիկ, կուրծք, բարձր:

| Բ-պ-փ | Դ-տ-թ | Ձ-ծ-ց | Ջ-ճ-չ | Գ-կ-ք |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 5

1. Բնագրից ընտրե՛լ կազմությամբ բարդ և ածանցավոր բառերը և լրացնել աղյուսակը

| Բարդ բառեր | Ածանցավոր բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |

2. Գրե՛լ ընտրված բառերի արմատները և ածանցները
3. Կազմե՛լ նոր բառեր այդ արմատներով և ածանցներով:
4. Այդ բառերով կազմե՛լ մտքով իրար հաջորդող նախադասություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Ընտրե՛լ փակագծում տրված բառերից մեկը և լրացնել նախադասությունը

Արդեն աշուն է, ...(հորդ, հորթ) անձրև է գալիս:

(Կրունկները, կռունկները) գարնան ավետաբեր թռչուններն են:



# ԿՌՈՒՆԿ ԿՐՈՒՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 7

Փոխադրության օրինակ III դասարանի համար

Ագահ մկնիկը

Սկյուռիկն ու մկնիկն ընկերացան: Նրանք գնացին ուտելիք ճարելու: Մկնիկը սովից մեռնում էր: Հասան մի մեծ ընկուզենու:Սկյուռիկը ծառը բարձրացավ ու սկսեց թափել ընկույզները: Ընկույզները ցած էին ընկնում: Մկնիկը ջարդում էր ընկույզները և միջուկներն ուտում: Ագահ մկնիկն այնքանկերավ, որ փորն սկսեց ցավել:

Հարցաշար

1. Ու՞ր գնա
2. Ի՞նչ արա
3. Ինչպե՞ս
4. Ինչպե՞ս

Հենա թյուններ.ճարել, սովից մեռն

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՐԱՆ 3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Ո՞ր բառի բաց թողնված տեղում պետք է գրել ք տառը
   Միր-
   Մար-ագետին
   Թա-ստոց
2. Ո՞ր բառում կա ուղղագրական սխալ
   Հնչյուն
   Թռչյուն
   Սյունակ
3. Ընկույզ
4. Լրացրու՛ բաց թողնված տառերը:

   Ար-են խոր աշուն է: Օրերը ցրտել են ու կար-ացել: Սկսվել են հոր-անձրևները: Տեր-ները թափվել են, ծառերը մեր-ացել, թ-չուններն ու կեն-անիներն ար-են նախապատրաստվել են ձմ-ան գալուն: Մար-իկ էլ հետ չեն մնացել նրանցից:Նրանք սիրով սպասում են ձ-ան սպիտակ ու նուր- փաթիլներին:

5. Առանձնացրու՛ տրված բարդ բառերի արմատները:
   Լեռնադաշտ
   Պարերգ
   Մեծանուն
   Քաղցրաձայն

6. Տեքստից դուրս գրիր բարդ և ածանցավոր բառերը

   Հորդառատ անձրև էր: Մուգ ամպեր էին հավաքվել երկնակամարում: Խոտերն ու ծաղիկները փնտրում էին արևին: Հանկարծ փչեց զով քամին: Դալար խոտերն ու քնքշաբույր ծաղիկները բարձրացրին իրենց խոնարհած գլխիկները: Երկնակամարում շողաց հրաշեկ արևը: Հավքերը երգեցին, ծաղիկներն ուրախ քրքջացին, տերևները պար բռնեցին: Երեմը, Օֆելյան և Էմման նստեցին ծաղկած սալորենու տակ և հյուսեցին այս հրաշք արևի հեքիաթը:

| Բարդ բառեր | Ածանցավոր բառեր |
| --- | --- |
| | |

7. Ընդգծիր հատուկ անունների գրության սխալները:

Երևանը հայաստանի մայրաքաղաքներից է: Այն հիմնել է արգիշտի թագավորը: երևանը գտնվում է արարատյան դաշտում մեծ և փոքր մասիսների դիմաց: Քաղաքի միջով հոսում են հրազդան և գետառ գետերը: Գեղեցիկ է հրազդանի ձորը, որը երևանցիների ամառային հանգստի վայրերից մեկն է:

8. Կարդա՛, դուրս գրիր բարբառային բառերը, գրիր այդ բառերին համարժեք գրական բառերը:

Ժամանակով իրեք ջահել տղա գնում են աշխատանքի: Գնում են հասնում մի ճամփաբաժանի: Նրանք իրար խոսք են տալիս՝ ով որ առաջինը ետ դառնա, սպասի մեկելներին. ոնց որ իրար հետ դուրս են եկել գեղիցը, էնպես էլ իրար հետ ետ գան:

Անց ա կենում մի քանի տարի: Էդ տղերքը ետ են գալիս իրենց նշանակած տեղը: Ամեն մեկը սկսում ա պատմել իր գլխի եկածը: Նրանցից մեկը ասում ա.

-Ես յոթ տարի Վանա թագավորի մոտ ձիապան էի: Աստծու ամեն առավոտ թագավորն ինձ հարուր ոսկի էր տալիս ու հրամայում, որ տանեմ աղքատներին բաժանեմ: Ես էլ էդ հրամանը հալալությունով կատարում էի: Յոթ տարին, որ թամամեց, թագավորը շատ փող տվեց ինձ ու ճամփու դրեց: